

ՀԱՆԻԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ամեն ամսոյ սկիզբը:
 Բաժանորդագինն է կամ թիկի վճարելի՛ Տարեկան 8 ֆր. —
 — 4 րր.: — Վեցամսեայ՝ 5 ֆր. — 2 րր. 50 կոպ.:
 Մեկ թիւ առանձին կը վաճառուի 1 ֆր. — 50 կոպ.:

Խմբագրութեան կենդրոնախոյրն է Վիեննա, Միխի-
 թարեան Միաբանութեան Մայր վանքը:
 Ճարտու ծախքն իրագործութեան վրայ է:
 Ժամանակակից առանձին տակարարութեամբ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
 ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Հետազոտութիւնը նախնեաց
 ուսման վրայ: — Հայկական նշանագրաց
 մասին:
 ԳՐԱԿԱՆ — Պատմութիւն հայ լրագրութեան: —
 Յովնան Յարութիւնեան †: — Փրոֆ. Էերովտ
 Պատկանեան †:
 ԲԱՆԱՍՏԵՂՎԱԿԱՆ — Պուալոյի Արուեստ քանա-
 ստեղծութեան.
 ԹՂՎԱԿՈՒԹԻՒՆ — Մարիամ Թերեզիայի Թրե-
 ստի Հայոց տուած արտօնագիրն:

ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ
 ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ — Մոմագործութիւն:
ԲԵՐՈՅԱԿԱՆ
 ԽԱՉ ՈՒ ԾՅՓԻՉ — Վերջին ժամանակներէ վէպ մը:
ՇՅՆՆԱԿԱՆ
 ՆՈՐԱՆՈՒՐ — ՏՆՏԵՍԱԿԱՆ — ՄԱՆՐԱՆՈՒՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ (Պատկ. Կարոյն Լու-
 զովիկոս Արքեպիսկոպիտի):

ՈՐՍՈՒՄՆԱԿԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՔ ԵՆԹԵՆԱԾ ԲԱՄԿՈՐԷՆԻՆ ՎՐԱՅ
 ԲԱՄԿՈՐԷՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ
 (Հարսնականութիւն)

15.

Գ. ՀՆԱԳՈՑՆ ԲԾՅԱՐԱՆԻ

Ինչի ծանօթացած բժշկարանաց մէջ հնագոյնին ըստ գրու-
 թեան են այս երկուքն: Ա. Ս. Ղարսու մասնագրութեան մտադա-
 թեայ բոլորքի բժշկարանն, որ ի թուին Հայոց Չիֆ. — 1294 զրուած
 է հրամանաւ Հեծմոյ արքայազորի՝ Կոստանտնուպոլսէ, ինչպէս կը տես-
 նուի զբարձրն սկիզբն, մէն ու վերջ գրուած երկը յիշատակարան-
 ներէն (Տես Սիսուան, էջ 337): Այս այն բժշկարանն է, որ թարգ-
 մանեալ կրուի յարաբերէնէ՝ Գագկոյ (Առաջոյ) ժամանակն, զոր եւ
 քանի մի անգամ յիշատակած ենք: (Տես առանձինն 101) — Բ. Մեր
 մասնագրութեան (Թ. 101, Ա.) բժշկարանն, նշնպէս բոլորքի բոլոր
 թղթեայ, գրեալ ի թուին Հայոց ՊՁԻ. — 1438, զոր օրինակել տուած
 է Յովհաննէս Հեփէ՝ որդի Արապեան Սկանաբի: (որ ինքնին բժիշկ
 էր, ինչպէս ձեռագրին մէջ կը նշանակուի տեղ մի ի լուսանունն, ուր
 տար գրել գրուած է «Առուած որոմայ Սկանաբին հոգուս՝ հու-
 փէինն») — երկու ձեռագիրք եւս ըստ բուսականին փայտուչ գրու-

թիւն են եւ շարժարակն ազատ ի սխալմանց: — (Ըստ Մայր ցու-
 ցակի Էնթամնի, տղ. ի Տփղիս, 1863, ի մէջ 22 բժշկական գրուածոց
 մասնագրութեան կայ հնագոյն եւս բժշկարան, որ է եօթներորդն ի
 կայքին, բոլորքի գրեալ բարձրեայ թղթի վրայ ի թուին ՉԻԷ.
 — 1276, որ յիշատակարանն եւս ունի: Ասոր վրայ առ այժմ պարտի
 միայն):

Ասամկորէն մասնագրութեան վրայ ընդ-
 Հանուր տեսութիւն ընելով, ըսած ենք (9) թէ
 շատ առատ են բժշկական գրեանն, եւ քան զամե-
 նայն ծիւղս գրականութեան հարուստ է բժշկա-
 կանութեան ծիւղն: Նշնպիսի գրոց այս յաճախու-
 թեան պատճառն ինքնին յայտ է. որովհետեւ
 ամէն տեղ եւ ամէն ժամանակ բազմաթիւ հետեւ-
 ողներ կ'ունենան այն արուեստը եւ գիտութիւնը,
 որ աւելի օգտակար նա թէ կարեւոր են ժողովր-
 դեան: Եւ ի՞նչ կայ այնչափ կարեւոր՝ որչափ այն
 արուեստն ու գիտութիւնն, որ առողջութիւնը
 դարմանելու եւ պահպանելու կը ծառայէ, կենքն
 ու առողջութիւնն ըլլալով մեծագոյնն երկրաւոր
 բարեաց: Ասոր բնական հետեւութիւնն է՝ կենաց
 եւ առողջութեան պահպանութեան ծառայող գրոց
 բազմութիւնն: — Իսկ ասոնց ուսմական բարբառով
 յօրինուելուն պատճառն եւս դիւրաւ կ'իմացուի,
 եթէ միտ դրուի որ անոնց հեղինակքն (Թարգմա-
 նիչք, հաւաքողք, համաօտողք, մեկնիչք,) բնա-
 կանապէս արուեստին տեղեակք կամ բժիշկք՝ ուս-
 տի եւ սովորաբար յաշխարհական դասէն մարդիկ
 ըլլալու էին: Արդ՝ գիտենք թէ ի միջին դարս,
 մանաւանդ յետ Թ. գարու, աշխարհականաց չէր
 այնչափ ծանօթ գրաբար լեզուն, զոր թէ եւ հաս-
 կընային՝ չէին կարող գիբաւ եւ ըստ օրինի գրել:
 Բայ աստի՛ նոյն հեղինակք (խմբագիրք) զլիաւո-
 րաբար աշխարհականաց համար կը գրէին, այս
 ինքն՝ այնպիսեաց համար, որ կամ գործականապէս
 բժշկական արուեստին կը զբաղէին եւ կամ հետա-
 մուտ էին տեսականապէս ուսանելու. ուստի թէ եւ
 հեղինակք գրաբարագէտք ըլլային, ստիպեալ էին
 անոնց լաւ հասկըցած լեզուաւ գրել:

Բժշկականութեան վրայ մինչեւ զմեզ հասած
 այս ուսմական գրուածոց մէջէն՝ առաջնկայ Հասա-
 ծիս նիթ պիտի առնուք երկու առաջին ձեռա-
 գիրքն եւեթ, զոր ի վեր անգր ի մէջ բերինք:
 Վասն զի մեզի ծանօթ գրութիւններէն՝ ըստ մեր
 տեսութեան՝ այն երկուքն միայն կը վերաբերին
 այս ժամանակի միջոցին: — Բայց անոնց հետադո-